

Շէյխին տունը հիւրասիրութեւն չուրջ՝ կը նկատէ որ գետինը «գոր-  
դուած էր գեղեցիկ Թրքական գորգերով»<sup>(57)</sup>։ Իսկն Պաթուժա բնիկ  
Թանճիրցի էր, անձանօթ Թուրքիոյ եւ թուրքերէն լեզուին, եւ կը  
միտի միշտ ամէն լաւ բանի մէջ առաջնութիւնը մասճեատականներուն  
տալ, սակայն հակառակ ասոր Փոքր Ասիոյ հիւսուածեղէններու ար-  
տադրութիւնը սակայն ամէն միշտ բնիկ քրիստոնեաններուն վերադրել,  
այսինքն Հայոց եւ Յոյներուն։ Սօսելով Իրաքի իշխանութեան սահ-  
մաններուն պատկանող Ազսէրայի մասին, կը գրէ. «... ուր անոնք  
( քաղաքին բնակիչները ) կը շինեն ոչխարի բուրդէ գորգեր, որոնք  
մինչեւ Հնդկաստան, Չինաստան եւ Թուրքերու երկիրը կ'արտա-  
ուին»<sup>(58)</sup>, առանց ճշգրիտ թէ Ազսէրայի Հայ, Յոյն թէ Մասճեատա-  
կան բնակչութիւնն է որ կ'արտադրէր այս նշանաւոր գորգերը։ Կը  
խորհրմ որ եթէ մասճեատականները եղած ըլլային՝ ան առանց տա-  
տամսելու զայն պիտի յիշէր։

Նոյն ատեն, իրմէ հազիւ յիսուն տարի առաջ, Մարքոյ Բուրյ  
անցնելով Իսկն Պաթուժայի անցած երկիրներուն եւ քաղաքներուն  
մէջէն (Կեսարիա, Երզնկա, Սերաստիա) անտարակուսելի կերպով եւ  
որոշ կը վկայէ որ երկրին հայ եւ յոյն բնակիչներն էին որ կ'արտա-  
դրէին լաւագոյն հիւսուածեղէնները եւ գորգերը։ Մինչ Իսկն Պա-  
թուժա չի յիշեր Կեսարիոյ եւ Սերաստիոյ հայ գորգագործները կամ  
Երզնկայի աշխարհասօչակ կտաւագործները<sup>(59)</sup>։

Թրքական գորգերը (Turkie carpets) որակումը կը գտնենք նաեւ  
Վենետիկցի ուղեգիր J. Barbaroի մօտ, որ Հայաստանը Թուրքոմա-  
նիոյ մօտ կը նկատէր։ 1511-1534 արեւելեան բոլոր գորգերը՝ որ Անդ-  
լիա ներածուած էին՝ կը ճանչցուէին իրր Թրքական գորգեր<sup>(60)</sup>։  
Օրինակ, 1534ին անգլիական երկու նաւեր, Holy Cross եւ Mathew  
Gonson, այն ատեն Թուրքիոյ պատկանող յունական Քիոս եւ Գանտիա  
կղզիներէն մետաքս, թուրքի գորգեր եւ ուրիշ ապրանքներ բեռցած  
եւ կը գտնուային<sup>(61)</sup>։ Դարձեալ կը յիշուի որ Անգլիոյ Հենրի Ը-ի  
(1491-1547) կողմէ Կիպրոսի գինի ներածելու խնդրով Վենետիկի  
հանրապետութեան զրկուած գետնան Կարտինալ Wolsey վենետիկցի-  
ներուն իրեն նուիրած քանի մը ծրար Թուրքի գորգերով եւ եկաւ։  
Տեսանք թէ նոյնիսկ 1579ին անգլիացիք կ'ուզէին գորգահիւս եւ գորգի

(57) Selections from the travels of Ibn Batuta. — 1929, New York, p. 126.

(58) Անդ, էջ 131։

(59) 1925ին A. U. Pope կամակար հակաճառութեամբ մը ուղեց Մարքոյ Բու-  
րյի որոշ եւ ընդունուած վկայութիւնը սխալ նկատել ու գորգաշինութեան ա-  
ռաջնութիւնը առ Եւրոպոյ (վաշկատուն) թուրքերու, յենրով վկայութեան մը,  
բաւ որուն՝ Ալի Պէկ Գարամանիոյ իշխանը 1377ի Յուլիսին Մուրաա Ա սուլ-  
թանին նուիրեց տասնութը գորգեր։ Սակայն վկայութիւնը չ'ըսեք թէ ասոնք  
Եւրոպայներու գործեր են։ Սակայն եթէ Եւրոպայներն իսկ չ'ինած ըլլային՝ անոնք  
կրնային արուեստը սորվիլ իրենց զրացի հայերէն եւ յոյներէն։

(60) Hakluyt's Voyages. — 1927, Vol. III, p. 3.

(61) Անդ, էջ 5։